

# ԱԳՐԱԼՐԱՍՈՒԼ

ՕԳՈՍՏՈՍ 15 - 25 2015 Թ. ԹԻՎ 21 (2076) ՏԱՆՈՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՍ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



### Սպասվում է կարտոֆիլի բարձր բերք

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հերթական աշխատանքային այցով մեկնել է Գեղարքունիքի մարզ՝ գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը դիտարկելու նպատակով:

Նախարարը մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղեկցությամբ, մի շարք համայնքներում դիտարկել է կարտոֆիլի ցանքատարածությունները: Սոթք համայնքում, 80 հեկտար տարածքի վրա, միջահաս և վաղահաս կարտոֆիլի ցանք է կատարվել, բերքահավաքը նախատեսում են սկսել մի քանի օրից, բերքատվությունը նախորդ տարվանից բարձր է. ընդհանուր առմամբ, ակնկալում են հեկտարից 50-70 տոննա բերք ստանալ: Իրացման խնդիր չունեն, այս պահին կարտոֆիլը գնում են անմիջապես դաշտից՝ 160 դրամով, իսկ սպառումը տեղական շուկայում է կազմակերպվում: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Աշոտ Գրիգորյանի խոսքով՝ միջահաս կարտոֆիլի մասսայական բերքահավաքը կմեկնարկի մոտ 15-20 օրից: Պաշտոնյան նշել է, որ նախորդ տարվա համեմատ, ընդհանուր առմամբ, շուրջ 10 տոկոս ավել բերք են ակնկալում ստանալ: Իրացման խնդիր չի առաջանա, գեղարքունյաց կարտոֆիլը շուտով կուղևորվի նաև ԵՏՄ շուկա:

Շատվան համայնքում նախարարը եղել է Սմբատ Գյուլիջանյանի պատկանող ագարակում: Ֆերմերը գագարի մշակությամբ է զբաղվում, այս տարվա բերքատվությունից գոհ է, ակնկալիքները շուրջ 30 տոննայի սահմաններում են: Վարդենիկ գյուղից Հարություն Մկոյանը մոտ 30 հեկտարի վրա է կարտոֆիլ մշակում, ցանքը կատարել է Գերմանիայից ներմուծված տնկանյութերով: Գարնանային կարկտահարությունը վարդենիկցիներին այս տարի չի շրջանցել, սակայն հետևողական աշխատանքների շնորհիվ կարողացել են բերքի կորուստը նվազագույնի հասցնել:

☞ 2

### Վրացական փորձը՝ հայ պատվիրակների գնահատմամբ

Աշխատանքային այցով Վրաստանի Հանրապետությունում գտնվող ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանիլայի և Աջարիայի Ինքնավար Հանրապետության գյուղատնտեսության նախարար Չաուր Պուտկարաձեի ուղեկցությամբ, այցելել է Աջարիայի ագրոսերվիս կենտրոն: Նախարարները շրջել են կենտրոնում, ծանոթացել տեխնիկական հնարավորություններին և մատուցվող ծառայությունների շրջանակին:

Բաթումի քաղաքում գտնվող այս գյուղատնտեսական սպասարկման կենտրոնը հիմնվել է ՄԱԿ-ի զարգացման գործակալության միջոցով՝ Եվրամիության ֆինանսավորմամբ: Կենտրոնի հիմնական առաքելությունը գյուղացիական տնտեսություններին բարձրորակ խորհրդատվական ծառայությունների մատուցումն է՝ նպատակ ունենալով նպաստել գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ու բարելավել աշխատանքների որակը: Բացի այդ, կենտրոնի նպատակակետում գյուղացիական կոոպերատիվների խթանման ծրագրեր են, ինչպես նաև՝ մարքեթինգային ծառայությունների մատուցումը: Նախարարին տեղեկացրել են, որը կենտրոնը զբաղվում է գիտական աշխատանքներով. այստեղ իրականացվում են տարբեր գիտափորձեր, մասնավորապես հատապտուղների նոր սորտերի փորձարկումներ: Այնուհետև երկու երկրների նախարարներն այցելել են կենտրոնի հարևանությամբ գտնվող ջերմոցային տնտեսություն, որտեղ ելակի մշակություն է իրականացվում, ինչպես նաև խաղողի փորձնական այգի:

Այցելության առաջին օրը նախարարը ծանոթացել է նաև ձկնաբուծության ոլորտում վրացական փորձին: Նախարարը եղել է «Իխտիոսի» ձկնաբուծարանում, որտեղ արտադրությունն իրականացվում է փակ շրջապտույտով ջրամատակարարման համակարգով: Նախարարը Թբիլիսում, հայ համայնքի ներկայացուցիչների հետ, Սուրբ Էջմիածին եկեղեցում մասնակցել է Խաղողօրհնեքի արարողությանը:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Յուրի Կարապետյանը վերջերս աշխատանքային այցով եղել է Արարատի մարզում: Կառավարության ղեկավարն այցելել է Արարատի մարզի Այգեստան և Պարույր Սևակ համայնքներ, հանդիպել բնակչությանը, ծանոթացել համայնքների առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներին, որոնք վերաբերում էին խաղողի բերքի մթերմանը, համայնքային ենթակառուցվածքների վերանորոգմանն ու բարելավմանը: Յուրի Կարապետյանը նշել է, որ կառավարությունը կքննարկի և հնարավորության սահմաններում լուծում կտա ներկայացված խնդիրներին:

Հաջորդիվ վարչապետը շրջայց է կատարել «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ի Մրգավանի մասնաճյուղում և «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ի տարածքում, հետևել արտադրական գործընթացի կազմակերպմանը, ծանոթացել ընկերությունների ընթացիկ, ինչպես նաև ընդլայնման ու ներդրումային ծրագրերին: «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ն զբաղվում է կոնյակի, գինու, օղու և պտղահատապտղային պահածոների արտադրությամբ, «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ն՝ կոնյակի, գինու, խաղողի և մրգային օղիների արտադրությամբ: Երկու ընկերությունում ներդրված են որակի և անվտանգության վերահսկման միջազգային չափանիշներ ու համակարգեր, արտադրանքն իրացվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Շրջայցից հետո գործադիրի ղեկավարը խորհրդակցություն է անցկացրել Պռոշյանի կոնյակի գործարանում և Արարատի գինու գործարանում, որին մասնակցել են գործարանների ղեկավարները և Արտաշատի, Արարատի և Վեդուրի տարածաշրջանի համայնքների ղեկավարները: Առաջնահերթ քննարկվել է խաղողի բերքի մթերման հարցը, ինչն այս տարի առատ է և գերազանցում է նախատեսված պահանջարկը: Վարչապետը տեղեկացրել է համայնքների ղեկավարներին, որ կառավարությունը քայլեր է ձեռնարկում, որպեսզի բերքը գյուղացու մոտ չմնա, և մթերումն իրականացվի նախորդ տարվա գնով: Յուրի Կարապետյանը նշել է, որ գործադիրը նաև քննարկում է պետական աջակցության ծրագրերով մթերող ձեռնարկություններին օժանդակելու հարցը, որպեսզի վերջիններս, նախատեսված պահանջարկից բացի, կարողանան մթերել նաև խաղողի լրացուցիչ քանակություն:

«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ի ղեկավարությունը նշել է, որ տարեցտարի գործարանի կողմից մթերվող խաղողի ծավալն աճում է, և անցած տարի մթերվել է շուրջ 14000 տոննա խաղող: Ընթացիկ տարում գործարանը պատրաստվում է սեփական ուժերով մթերել 15000 տոննա խաղող, և լրացուցիչ՝ ևս 10000 տոննա խաղող մթերելու համար դիմել է պետական օժանդակություն ստանալու համար: Իր հերթին «Արարատի գինու գործարան» ՍՊԸ-ի ղեկավարությունը նշել է, որ գործարանն ունեցել է դինամիկ աճ խաղողի մթերման առումով, և անցած տարի մթերել է 10700 տոննա խաղող: Այս տարի հաշվի առնելով բերքի առատությունը և որակը՝ գործարանը պատրաստ է պահպանել և նաև գերազանցել նախորդ տարվա մակարդակը՝ մթերել այնքան տոննա խաղող, որքան գյուղացին կներկայացնի գործարան:

Վարչապետը հետաքրքրվել է նաև նշված տարածաշրջանների գյուղերում առկա մյուս խնդիրներով: Համայնքների ղեկավարները շնորհակալություն են հայտնել վարչապետին՝ նախորդ տարի կատարած այցի ժամանակ տրված խոստումները կյանքի կոչելու համար և ներկայացրել իրենց համայնքների բնակչությանը հուզող հարցերը, որոնք վերաբերում էին համայնքային՝ ջրամատակարարման, առող-

☞ 2

<b>Ջրամատակարարման արդյունավետության բարձրացում</b>	<b>Էջ 3</b>
<b>Մոծակներն այլևս չեն անհանգստացնում զբոսաշրջիկներին</b>	<b>Էջ 5</b>
<b>Մասնագետի խորհուրդը</b>	<b>Էջ 7</b>

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

1

ջապահական, սոցիալական ու մշակութային ենթակառուցվածքների վերանորոգմանն ու բարելավմանը: Վարչապետը մի շարք հարցերի լուծման առնչությամբ տեղում հանձնարարականներ է տվել պատասխանատուներին և նշել, որ կառավարությունը կքննարկի և կփորձի հնարավորության սահմաններում լուծում տալ բարձրացված մյուս խնդիրներին ևս:

Վարչապետին այցի ընթացքում ուղեկցել է Գյուղատնտեսության նախարար Ս.Կարապետյանը, ԶԳ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը, ԶԳ Արարատի մարզպետ Ռ.Աբրահամյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի տնօրեն Ա. Կիրակոսյանը, մարզպետի տեղակալներն ու պատասխանատու պաշտոնյաներ: Այցի ընթացքում մարզպետ Ռ. Աբրահամյանը տեղեկատվություն է ներկայացրել ներկա պահին մարզում ընթացող գյուղատնտեսական, բերքի և խաղողի մթերման հետ կապված արդեն կատարված և նախատեսվող աշխատանքների մասին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Մպասվում է կարտոֆիլի բարձր բերք

Այցի շրջանակում նախարարը եղել է նաև Մեծ Մասրիկ համայնքում, որտեղ կարտոֆիլի ցանքատարածությունները շուրջ 30 հա տարածք են զբաղեցնում: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական աշխատանքները մարզում բավականին լավ են կազմակերպված: Նախորդ տարվա համեմատ շուրջ 1450 հեկտարով ավելացել են կարտոֆիլի ցանքատարածությունները: Չնայած զարնանային կարկտահարությունը որոշ համայնքների վնաս էր հասցրել, սակայն շրջայցը փաստեց, որ նաև գյուղացիների քրտաջան աշխատանքի շնորհիվ, հնարավոր է եղել վերականգնել ցանքերը: Այս տարի Գեղարքունիքի մարզում հատկապես կարտոֆիլի բարձր բերք է սպասվում»,- ամփոփելով այցի արդյունքները՝ նշել է նախարարը: Ըստ նրա, ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական աշխատանքները հանրապետությունում ընթանում են բնականոն հունով: Պատշաճ կազմակերպվում է արտահանման և մթերումների գործընթացը: Ըստ նախարարի՝ շուտով կսկսվի խաղողի բերքահավաքը, և նախարարությունն աշխատանքներ է տանում վերամշակող ընկերությունների հետ, որպեսզի մթերումների հետ կապված խնդիրներ չծագեն: Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն էլ իր հերթին հավելել է, որ ավանդաբար Գեղարքունիքն ապահովել է հանրապետության կարտոֆիլի ամբողջ պահանջարկի շուրջ 50 տոկոսը, այս տարի շուրջ 10 տոկոսով մարզում ավելացել են կարտոֆիլի ցանքատարածությունները, հեկտարից 400-450 ց բերք կհավաքեն: Արդյունքում՝ Գեղարքունիքի կարտոֆիլը ոչ միայն տեղական շուկայի պահանջարկը կբավարարի, այլև կարտահանվի:

Մարզպետի խոսքով՝ բարձր բերք ստանալու նպատակով գյուղացիական տնտեսություններն այժմ կարտոֆիլի մշակության մեջ նոր տեխնոլոգիաներ են կիրառում, փորձարկում են արտերկրից ներկրված սերմացուներ, միևնույն ժամանակ զուգահեռ սկսել են զբաղվել նաև այլ մշակաբույսերի՝ կաղամբի, գագարի, ճակնդեղի մշակությամբ:

Հարաբերությունների ընդլայնում՝ նոր ուղղություններով

Վրաստան կատարած այցի շրջանակներում գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Վրաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, որտեղ կայացել է երկու երկրների գյուղնախարարների առանձնագրույցը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություններ կայացնող հարցեր՝ Հայաստանի և Վրաստանի միջև գյուղատնտեսության բնագավառում հարաբերությունների ընդլայնման և նոր ուղղություններով փոխգործակցության զարգացման շուրջ: Կողմերը նշել են, որ անհրաժեշտ է երկուստեք ջանքեր ներդնել հատկապես ապրանքաշրջանառության ծավալների մեծացման և համատեղ ձեռնարկությունների ստեղծման ուղղությամբ՝ ընդգծելով առկա ներուժի առավելագույն արդյունավետ իրացման կարևորությունը: Երկու հարևան երկրների ագրարարին ուղրտի պատասխանատուներն առանձնացրել են փորձի փոխանակման հնարավորությունները՝ մասնավորապես ձկնաբուծության ոլորտում և «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրի» (ENPARD) շրջանակում, որն ուղղված է գյուղատնտեսության և գյուղական համայնքների կայուն և համապարփակ զարգացմանը: Հանդիպման ավարտից հետո Սերգո Կարապետյանը և Օթար Դանելիան հանդես են եկել համատեղ մամուլի ասուլիսով: Սերգո Կարապետյանը, լրագրողների խնդրանքով անդրադառնալով համագործակցության ընդլայնման հեռանկարներին, հատկապես կարևորել է գյուղացիական կոոպերատիվների խթանման, ապահովագրական համակարգի ներդրման ուղղություններով գործակցության զարգացման անհրաժեշտությունը:



Նախարարը հավելել է, որ Վրաստանի համար կարող է օգտակար լինել խաղողի սեղանի սորտերի աճեցման տեխնոլոգիաների, ինչպես նաև ջերմոցային տնտեսությունների զարգացման հայկական փորձը: Առանձնահատուկ կարևորվել է փոխայցելությունների ակտիվացումը երկու երկրների միջև ինչպես պաշտոնական մակարդակում, այնպես էլ՝ մասնագիտական շրջանակներում:

Նախարարները ևս մեկ անգամ ընդգծել են ձեռներեցության խթանման կարևորությունը համատեղ նոր ձեռնարկությունների ստեղծման ուղղությամբ՝ մատնանշելով հայ և վրացի գործարարների համատեղ ներդրումներով ստեղծված «Իխտիսի» ձկնաբուծարանի հաջողված օրինակը:

Նախարարն այցելել է նաև Վրաստանի սննդամթերքի անվտանգության գործակալություն և գիտական կենտրոն, ծանոթացել իրականացվող աշխատանքներին: Այսուհետև Սերգո Կարապետյանն իր վրացի պաշտոնակցի ուղեկցությամբ ուղևորվել է Կախեթի, որտեղ այցելել է «Կինձմարուլիս մարանի» գինեգործական ընկերություն, «Մեխանիզատոր» ծառայությունների կենտրոն:

ԾՐԱԳԻՐ

Կիրականացվի կաթիլային ոռոգման փորձնական ծրագիր

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պետական բյուջեի միջոցներով Արմավիրի մարզի Ակնալիճ, Շենիկ և Արարատի մարզի Ջրաշեն, Արմաշ համայնքներում՝ 1-ական հեկտար հողատարածքներում, կիրականացնի կաթիլային ոռոգման համակարգի ներդրման փորձնական ծրագիր:

Այս մասին «Հողային ռեսուրսների և պարենի անվտանգությունը կլիմայի փոփոխության և ջերմոցային գագերի արտանետումների լույսի ներքո» թեմայով կլոր սեղանի ժամանակ նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանը: «Մենք ունենք առանձին հողատարածքներ, որոնք համարվում են գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող տարածքներ, որտեղ ոռոգման նորմաներով նախատեսված չափաքանակները բացարձակապես չեն բավարարում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար: Կարծում են, այս ծրագիրը կդառնա օրինակ՝ այն ընդարձակելու համար: Չնայած, մենք մի շարք տարածքներում այսօր արդեն ունենք կաթիլային ոռոգման օրինակը»,- ասել է փոխնախարարը:

Նա կարևորել է Հայաստանում ջրամբարների կառուցումը՝ օրինակ բերելով 2014թ.-ին դիտված սակավաջրությունը: «Լրջագույն խնդիր է ջրային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը: Մենք մեր հնարավորությունների ընդամենը մեկ երրորդն ենք հազիվ օգտագործում: Ամբողջ աշխարհն այսօր կանգնած է լրջագույն խնդրի առաջ: Դուշանբեում ՄԱԿ-ի կողմից կազմակերպված «Ջուրը կյանքի համար» կոնֆերանսի ընթացքում հնչեցին տարբեր երկրների՝ ասիական, մերձավոր արևելյան, աֆրիկյան և այլ երկրների մասնագետների, գիտնականների կարծիքները, որոնք ահագանգ են հնչեցնում, որ ժամանակն է, որպեսզի շատ լրջորեն, շատ խելացի և նպատակային օգտագործվեն այդ ռեսուրսները: Դա մեզ համար նույնպես ակնհայտ է, 2014 թվականի ծանր օրինակը: Կառավարությունը ստիպված եղավ հռչակել տարին սակավաջուր: Արարատյան դաշտում մենք շատ լուրջ խնդիրներ ունեցանք ջրամատակարարման ուղղությամբ, ստիպված էինք նույնիսկ նախկինում չօգտագործվող, չգործող 109 խորքային հորերը վերագործարկել, որոշակի լրացուցիչ ջրամատակարարում ապահովել, որպեսզի հնարավոր լինի մեղմել վիճակը: Ընթացիկ տարին բարենպաստ է, և բոլոր ջրամբարներում կան անհրաժեշտ պաշարներ: Ամբողջ մեր ջրային ռեսուրսների 70 % բարձր լեռնային հատվածներից հոսում է դեպի հարթավայրային հատված, մենք բոլոր հնարավորություններն ունենք ջրամբարների միջոցով կուտակել այդ ռեսուրսը: Խնդիր է դրվում կառուցել Կապսի, Եղվարդի, Վեդու, Մաստարայի ջրամբարները: Այս ուղղությամբ բավականաչափ մեծ ծավալի և լուրջ աշխատանքներ են տարվում»:

www.ecolur.org

ՄԵՂՐԻ ԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂԻ ՓԱՌԱՏՈՆ



Տավուշի մարզի Բերդ քաղաքի «Սորանի» այգիներում օգոստոսի 16-ին անցկացվեց «Մեղրի և հատապուղի» փառատոն, որը չորրորդ տարին անընդմեջ կազմակերպում էր «Տավուշի հոգևոր վերածնունդ» հիմնադրամը՝ Հայկ Չոբանյանի անմիջական ղեկավարությամբ:

Միջոցառմանը ներկա էին մարզպետարանի աշխատակիցներ՝ փոխմարզպետ Լևոն Սարգսյանի գլխավորությամբ: Իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան «Հուլիսի կամուրջ», «Կարմիր խաչ», «ՀՕՏ» և այլ կազմակերպությունների անդամներ: Արդեն ավանդական դարձած փառատոնը ոչ միայն Տավուշի մարզի՝ այլ նաև Հայաստանում անցկացվող հիմնական միջոցառումներից մեկն է: Այս փառատոնը տարածաշրջանի զարգացման ծրագրի բաղադրիչ մասն է, որի նպատակը միջոցառման ընթացքում ամբողջ տնտեսական, մշակութային ներուժի և հնարավորությունների ներկայացումն է: Մեղրի, հատապուղիների և արհեստագործական ավաններում ներկայացված էր նաև ավանդական խոհանոցը: Տավուշի մարզի տասը համայնքների 100-ից ավելի պատանիներ և աղջիկներ իրենց երգ ու պարով բարձր տրամադրություն փոխանցեցին ներկաներին, որոնց թվում էին նաև զինվորականներն ու հոգևորականները: Զրույցի ընթացքում Հայկ Չոբանյանը նշել է, որ փառատոնի մասնակիցները ցանկանում են մեղվաբուծության, գյուղատնտեսության ոլորտի հետ կապված ավելի շատ մասնագիտական խորհրդատվություն ստանալ: Փառատոնի շրջանակներում կատարվել է նաև խաղողօրհնության ծիսակարգ:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՈՌՈՂՈՒՄ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ

Վարչապետ Յովիկ Աբրահամյանի գլխավորությամբ, կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն՝ հանրապետությունում 2015 թ. ոռոգման գործընթացի իրականացման վերաբերյալ: Խորհրդակցությանը մասնակցել են 33 փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը, 33 գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, 33 ՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արամ Գարությունյանը, 33 գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ջրօգտագործողների ընկերությունների տնօրենները, պաշտոնատար այլ անձինք:

Արամ Գարությունյանը, զեկուցելով 2015 թ. ոռոգման գործընթացի իրականացման աշխատանքների մասին, նշել է, որ 33 կառավարության որոշմամբ, ոռոգման համակարգերի հիմնա-նորոգման 2015 թ. ծրագրով հատկացվել է 800.0 մլն 33 դրամ: Ծրագրի շրջանակում իրականացվել են պոմպակայանների, խորքային հորերի, ջրանցքների խողովակաշարերի նորացման աշխատանքներ: 33 կառավարության որոշմամբ, 2015 թ. ՋՕԸ-երին 33 պետական բյուջեից հատկացվել է շուրջ 5.2 մլրդ 33 դրամ:

Ոռոգման նպատակով, Սևանա լճից ջրառը /օգոստոսի 5-ի դրությամբ/ կազմել է 121.261 մլն մ<sup>3</sup>: Նախորդ տարվա 216.121 մլն մ<sup>3</sup>-ի համեմատ: 80 կետերում տեղադրվել է ժամանակակից ջրաչափեր, որոնց շահագործումը թույլ կտա ամենօրյա առցանց հսկողություն սահմանել այդ կետերում ջրաքանակների հոսքը կարգավորելու համար: Առավել մեծ ջրապահանջարկ ունեցող ՋՕԸ-երում անցկացված գիշերային ոռոգման ստուգման արդ-



յունքները ցույց են տվել, որ գիշերային ջրամատակարարումն իրականացվում է պատշաճ մակարդակով՝ համապատասխան մասնագետների և աշխատակիցների մասնակցությամբ: Ձեռնարկվել են նաև կազմակերպչական միջոցառումներ՝ 33 ջրտնտեսություններում ՋՕԸ-երին աջակցող խմբի ձևավորում, ջրերի հաշվառման SKADA համակարգի ներդրման 80 դիտակետի կառուցում, LOKATOR համակարգով ՋՕԸ-երի ծանր տեխնիկայի աշխատանքի հսկողություն և համակարգում, ՋՕԸ-երի աշխատանքի և կառուցվածքային խնդիրների վերլուծություն և այլն: Արամ Գարությունյանը նշել է, որ 33 70 համայնք ունի գեր-նորմատիվային ջրապահանջարկ, ինչը պայմանավորված է մշակվող ցանքատարածությունների ծավալի ավելացմամբ: Մտքերի փոխանակության ընթացքում, վարչապետը ՋՕԸ-երի տնօրեններից հետաքրքրվել է ջրամատակարարման արդյունավետության, ինչպես նաև վճարների հավաքագրման ծավալով և հանձնարարել պատշաճ կազմակերպել ջրամատակարարման գործընթացը: «Մեր նպատակը երկու կարևոր հարց է. առաջին՝ ջրով ապահովել բոլոր հողօգտագործողներին, գյուղացիներին. որևէ գյուղացի հարց չբարձրացնի, որ ջրի պատճառով իր ցանքը չորացել է: Օգոստոսը մեր ոռոգման սեզոնի ամենաթեժ ամիսն է. հանձնարարում եմ՝ ժամանակին ջրով ապահովել հողօգտագործողներին, որպեսզի բերքը նորմալ հավաքեն: Աշխատեք երկար, աշխատեք 24 ժամ, ձեր աշխատակազմը թող նաև հերթապահություն անցկացնի գիշերները, որպեսզի որևէ դժգոհություն չառաջանա: Եվ, երկրորդ՝ կարգապահություն հավաքագրման գործընթացում. պետք է աշխատեք թափանցիկ և ազնիվ», - եզրափակել է կառավարության ղեկավարը:

Արամ Գարությունյանը ներկայացրել է նաև Հայաստանի Հանրապետությունում ջրամբարաշինության ոլորտում ձեռնարկվող քայլերը, նաև զեկուցել՝ միջազգային մի շարք կազմակերպությունների աջակցությամբ, Վեդու, Կապսի, Մաստարայի և Եղվարդի ջրամբարների կառուցման ու վերակառուցման աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Արդյունքում Հայաստանը լուրջ ջրային պաշարներ կունենա, ինչն էլ կնպաստի ոռոգման սեզոնին ջրամատակարարման արդյունավետության բարձրացմանը:

ԿՈՌՊԵՐԱՑԻԱ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ Է՝ ՏԵՄՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

«2014թ. մեզ այցելեցին ՕԲՍՖԱՄ-ի աշխատակիցները և հարցրեցին, թե արդյոք կցանկանայինք ստեղծել կոոպերատիվ, խոսքս օգնել և ջերմարտուն կառուցել: Մենք հրավիրեցինք համապատասխաններին, կազմակերպեցինք ժողով, քննարկեցինք առաջարկը և որոշեցինք փորձել», - ասում է Գոշ գյուղի գյուղատնտեսական կոոպերատիվի անդամ Անահիտ Վերանյանը:

Արդեն երկրորդ տարին է, ինչ գործում է Տավուշի մարզի Գոշ համայնքի 12 անձից բաղկացած գյուղատնտեսական կոոպերատիվը: Կանանց և տղամարդկանց թիվը բաշխվել է հավասարաչափ՝ 6 տղամարդ և նույնքան կին: «Աշխատում ենք համերաշխ, առանձնապես չենք տարանջատել տղամարդկանց և կանանց գործերը, մեր թիմում բացարձակ հավասարություն է, տղամարդիկ մեզ հետ միասին և՛ ցանք են կատարում, և՛ հավաքում են բերքը», - պատմում է տիկին Անահիտը:



Անահիտ Վերանյանը 52 տարեկան է, կոոպերատիվի ակտիվ անդամներից է: Մասնագիտությամբ ապրանքագետ-գործարարը գյուղում ունի երկու խանութ, որոնցից գրեթե եկամուտ չի ստանում, բարձր է դիսկալնությունը: Ստիպված էր եկամուտի ստացման այլ աղբյուր որոնել: «Գյուղում սկզբում շատերը կասկածում էին, չէին հավատում, որ կստացվի: Հիմա արդեն տեսնելով

րել: Սակայն, ՕԲՍՖԱՄ-ի կազմակերպած սեմինարների, խորհրդատվությունների և մշտական աջակցությունների շնորհիվ, մասնագիտական շատ գիտելիքներ է ձեռք բերել և հիմա այլևս դժվարություններ չունի: Բանջարանոցային մշակաբույսերի հետ խնդիրներ ծագելու դեպքում դիմում են նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբուստանային և տեխնի-



մեր հաջողությունները՝ անձամբ համոզվեցին: Համայնքում մեզ հետ հարգանքով են վերաբերվում, տեղական իշխանություններն աջակցում են: Բանջարեղենը և կանաչեղենը վաճառում ենք գյուղում, ընդ որում, շուկայի համեմատությամբ՝ էժան գներով: Իսկ կարիքավորների համար առանձնահատուկ զեղչեր են արվում: Այնպես, որ եթե ընդարձակենք տնտեսությունները, արդեն մեծ կլինի մեզ միանալու ցանկություն ունեցողների թիվը», - նշում է գործարարը: Նրա կարծիքով, կոոպերատիվում աշխատելը, եկամուտ ստանալուց բացի, նաև մեծ բավականություն է պարգևում: Ջերմատանը, բույսերի հետ աշխատելիս, հոգով հանգստանում է: «Առավոտյան առաջին գործս ջերմատան շտապելն է, որտեղ պետք է խոսեմ բույսերի հետ: Նրանք նույնպես, ինչպես երեխաները, սպասում են ուշադրության և փաղաքանքի: Չէ որ առանց սիրո և հոգատարության ոչ մի գործում հաջողության չես հասնի: Երջանկությունը երբեք մշտական չի լինում,

կական մշակաբույսերի գիտական կենտրոնի» մասնագետներին: «Ինձ համար շատ կարևոր է, որ ամուսինս աջակցում է ինձ տնտեսական գործերում, երբ ես զբաղված եմ ջերմատանը: Նա գիտակցում է, որ դա եկամուտի աղբյուր է ընտանիքի համար, գիտի, թե ինչ է նշանակում ինձ համար կոոպերատիվը», - հավելում է տիկին Անահիտը: Նրա կարծիքով, կինը չպետք է թույլ տա իրեն՝ թույլ լինել: «Դա մեզ համար շատ մեծ «ջրեղություն» է: Իսկ կոոպերատիվը ուժեղացնում է մեր կանանց, ամրապնդում նրանց դիրքերը», - եզրահանգում է տիկին Վերանյանը:

Նրա ցանկությունն է, որպեսզի պետությունը ավելի մեծ ուշադրություն դարձնի գյուղական կանանց խնդիրներին, աջակցի փոքր բիզնեսի զարգացմանն այն գյուղերում, որտեղ հիմնականում զբաղված են կանայք:

**ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՅՔԱՐ**

**ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԴԵՄ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Չնայած մոլախոտերի դեմ պայքարը, հերբիցիդների միջոցով, բավական արդյունավետ է և շատ դեպքերում շահավետ, կան իրավիճակներ, երբ դրանց կիրառումը ցանկալի չի կամ պարզապես արգելված է: Բացի այդ, մարդու կողմնորոշումը քիմիական և բնական միջոցների միջև գնալով աներկբա թեքվում է դեպի վերջինս: Մի գործընթաց, որն անդադրելիության բոլոր շանսերն ունի:

Մինչ այսօր մարդկությունը ճանաչել է մոլախոտերի դեմ կենսաբանական պայքարի 2 ձև՝ դասական կամ ինոկուլյացիոն և կենսահերբիցիդների եղանակ: Առաջին դեպքում օգտագործվում են առավելապես միջատներ, որոնք ընտրողաբար սնվում են տվյալ անցանկալի համարվող բուսատեսակով: Բացի միջատներից կիրառվում են նաև պաթոգեն սնկեր, բակտերիաներ, վիրուսներ կամ ֆիտոպլազմա, որոնք կամ սնվում են ոչնչացման ենթակա մոլախոտով, կամ անբուժելի վարակում նրան: Այս պարզ թվացող եղանակը նաև շահավետ կլինի, եթե չլինեին մի շարք բարդություններ:

Գործը զուլի բերելու համար նախ և առաջ անհրաժեշտ է գտնել տվյալ վայրում առկա տվյալ մոլախոտի մասատուն, ապա այն օրգանիզմները, որոնք պաշտպան կհանդիսանան կուլտիվացվող մշակաբույսի համար: Որից հետո անհրաժեշտ է բացառել էկոլոգիական այն ռիսկը, որի հետևանքով մոլախոտը վերացնող

որը սնվելով կակտուսի փափկամսով, բազում անցումներ է բացում նրա մեջ. արդյունքում արագ բազմանում են ակտերիաները:

Բեկումը տեղի ունեցավ 1930թ.-ին և 5-6 տարի անց 2 ամենատուժած նահանգներում արոտավայրերի 90 %-ից ավելին հետ վերադարձվեց:

ԱՄՆ-ում մոլախոտերի դեմ կենսաբանական պայքարի ամենավաղ էջ հանդիսացավ Եվրոպայից ներմուծված սրոհունդի (*Hypericum perforatum*) տարածման կանխումը, որը 1944 թ.-ին հասցրել էր գրավել արոտավայրային 1 մլն հա տարածք: Գտնվեցին տերևակեր բզեզների 2 տեսակ, որոնք 10 տարում նվազեցրեցին սրոհունդի պայույացիան մինչև 1%, որը, կենսաբազմազանության տեսակետից, միանգամայն ընդունելի չափանիշ է, իսկ արոտավայրերը դարձան նորից լիարժեք: Նույն խնդիրը Կանադայում և Չիլիում լուծվել է 15 տարվա ընթացքում, քանի որ պաշտպանական գործողություններն այնտեղ համեմատաբար ավելի ուշ էին մեկնարկել:



սերի (օրինակ՝ շաքարի ճակնդեղ, մանգոլ) հուսալի պաշտպանությունը մոլախոտերի (թելուկ) դեմ պայքարելիս,

բ/ արդյունավետ ագրեցության համար կենսահերբիցիդները պահանջում են ջրաշերտի բարակ թաղանթի առկայություն տերևների վրա և 12-15° C-ից ոչ պակաս ջերմաստիճան,

գ/ կենսահերբիցիդները դրսևորում են առավելագույն ակտիվություն 3 խսկական տերևի փուլում, որը, նախորդ կետի հետ միասին պայքարի աշխատանքներում լրացուցիչ լարում է առաջացնում, նույն վերաբերվում է օրվա ամենապատասխան փուլը ժամանակին՝ իրիկ-

նամուտին է. այդ կարճ ժամանակահատվածում մեծ տարածքներ հնարավոր չի մշակել,

դ/ սնկային սպորների կենսունակությունը պահպանվում է միայն գիշերվա ընթացքում՝ ավելի շուրջ ժամանակ դրանք չորանում են, իսկ պաշտպանիչ թաղանթներն առայժմ լավ են աշխատում լաբորատորիայում, բայց ոչ դաշտային պայմաններում,

ե/ սպորները պետք է արագ տեղ հասցվեն, հակառակ դեպքում անհրաժեշտ կլինի մշակումը կրկնել:

Այնուամենայնիվ, այս դժվարությունները հաղթահարելի են թվում, հատկապես նման և շահավետ, և արդյունավետ պատրաստուկների ստեղծման և տարածման հեռանկարը աչքի առաջ ունենալու դեպքում:

Վ Հ



Եվ վերջապես, նշենք ոչ այդքան հաջողված մի օրինակ, երբ 1966 թ.-ից սկսած Ուզբեկստանում, Ուկրաինայում, Ղազախստանում և Ղրղզստանում ճրագախոտ կամ գայլալիզ (*Orobancha*) կոչվող մոլախոտի դեմ պայքարել են ականող ճանճի (*Phytomyza orobanche*) միջոցով: 1970 թվականին սկսելով 50 հազար հեկտարից և 1984-ին հասցնելով 200 հազարի (մշակաբույսերը՝ արևածաղիկ և ծխախոտ)՝ հաջողվեց գրանցել 85 % արդյունավետություն: Հեկտարի հաշվով բաց թողած 500-1000 հարսնյակները բավարար չէղան արդյունավետ պայքար ծավալելու համար և ամեն տարի պահանջվեցին դրանց լրացուցիչ քանակներ, ինչն ավելի ծախսատար էր դառնում և չէր համապատասխանում դասական եղանակի մոտեցումներին:

ղը ինքը չի դառնա մասսակար օրգանիզմ՝ հատկապես սննդի վերահաս դեֆիցիտի պայմաններում: Ինոկուլյատներ ընտրելիս երբեմն հարկ է եղել հետազոտել 40-50, երբեմն՝ 80 և ավելի բուսատեսակներ: Եվ, իհարկե, պետք է բացառվի ինոկուլյատների տարածումը հարակից տարածքներ, որի համար գերադասվում է աշխատել մեկուսացված տարածքներում:

Այս եղանակի առավելությունն այն է, որ խնդիրը բավական երկար ժամանակահատվածի համար է լուծվում, ծախսերն էլ շատ չեն՝ 1-3 միլիոն եվրո: Թերությունն այն է, որ ապահովության համար վերը հիշատակած վերահսկողությունը պետք է լինում շարունակել մինչև 10-15 տարի: Նկարագրված դասական եղանակը չնայած փորձարկվել է 55 երկրներում, փայլուն արդյունք գրանցվել է դեպքերի միայն 10 %-ում (մնացածը՝ բավարար):

Առաջին խոշոր հաջողությունը գրանցվել է դեռևս 1863 թվականին Շրի Լանկայում, երբ տատակաթզենի սովորական (*Opuntia vulgaris*) մոլախոտի դեմ կիրառվել է *Dactylopius ceylonicus* վահանակրի մի տեսակ: Իսկ ամենահաջողված փորձը գրանցվել է Ավստրալիայում, որտեղ դեռ 1839 թվականին Տեխասից և Չիլիից ներմուծվել են *Opuntia inermis* և *Opuntia stricta* դեկորատիվ կակտուսներ, որոնցից առաջինը սկսել է այնպես արագ բազմանալ և տարածվել, որ 1900 թ.-ին զբաղեցրել էր արդեն 4 մլն հա արոտավայրեր՝ մինչև 1925 թվականը հասցնելով 24 մլն հեկտարի: Դրա դեմն առնելու համար 1921-1923 թվականներին սկսեցին ծավալվել մեծամասշտաբ փորձեր, որոնց ընթացքում փորձարկվեցին 160 տեսակ տերևակեր միջատներ, որից 23 տեսակը բաց թողնվեց վարակված տարածքներ: Աղյուսքում դրանցից 13-ն արդյունավետ եղանակ (12 միջատ և մեկ տիզ), իսկ երկրորդակիրը ճանաչվեց արգենտինական *Cactoblastis cactorum* հրաթիթեղը,

նում դասական եղանակի մոտեցումներին: Կենսահերբիցիդները նույնպես կոչված են մշակաբույսերի դաշտերում նվազեցնել մոլախոտերի որոշ տեսակներ: Այդպիսի հերբիցիդների ազդող նյութը սովորաբար պաթոգեն սնկերի սպորներ են տրամադրում՝ ընտրողաբար ազդելով որոշակի մոլախոտերի վրա: Դրանք բացահայտելու համար գտնում են անհրաժեշտ մասաված բույսը և որոշում հարուցիչը, որը բազմացնելով շաղ են տալիս դաշտով մեկ: Սակայն պետք է պատրաստ լինել նրան, որ վայրի բույսն այդքան շուտ չի հանձնվելու, որովհետև մշակաբույսերի հետ համեմատած՝ դրանք շատ ավելի լավ են մրցակցում ջրի և սննդատարրերի համար և բարձր դիմադրողականություն ունեն սթրեսների նկատմամբ:

Այս ուղղությամբ հետազոտությունները տարվում են նախորդ դարի 60-ական թվականներից: Առաջատարներն այստեղ Չինաստանն է ու ԱՄՆ-ը, որոնք միասին 14 պատրաստուկ են շուկա հանել, որից կայուն պահանջարկ ունեն 8-ը՝ 7-ը սնկային և մեկը բակտերիալ ծագման, բայց դրանցից ոչ մեկը, օրինակ, եվրոպական շուկա, պաշտոնական մուտք չի գործել: Այստեղ մի պարադոքս է նկատվում, որի հիմքում ընկած է մարդկային ինտեգրան. մեկ սինթետիկ հերբիցիդի ստեղծումը պահանջում է մոտ 150 միլիոն եվրո, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում լայնորեն կիրառվող *Collego* հերբիցիդի ստեղծման ծախսերը մոտ 5 անգամ պակաս են եղել, սակայն, նախ դրա օրենսդրական հիմքերը մինչ օրս մշակված չեն, և սինթետիկ հերբիցիդների տրքսիկոլոգիական և էկոլոգիական փորձարկումները թեկուզ շատ թանկ են, բայց հունի մեջ են ընկած և ժամացույցի պես են աշխատում: Կան նաև այս հասարակության կողմից սպասված առաջավոր եղանակի տարածման էական դժվարություններ:

ա/ ազգակցականորեն մոտ գտնվող մշակաբույ-

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐՔԻՑ  
ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Վերջերս Արթիկի տարածաշրջանի Անուշավան համայնքում, բնության տարերքից պաշտպանվելու նպատակով, տեղադրվեց հակակարկտային երեք նոր կայան, որից երկուսը՝ 33 կառավարության տրամադրած հրատապ աջակցության ծրագրի ֆինանսական աջակցությամբ, մյուսն էլ՝ համայնքային բյուջեի հաշվին:

Այն լրացնում է Արթիկի տարածաշրջանում գործող հակակարկտային կայանների արդյունավետությունը: Յուրաքանչյուր կայանի արժեքը կազմում է 3500-400 մլն դրամ, որոնք տեղադրված են միմյանցից 1 կմ հեռավորության վրա: Ինչպես նշել է համայնի ղեկավար Երվանդ Յակոբյանը, այն կարկտաբեր ամպի հարավային ճակատն է, որը փակում է ոչ միայն Անուշավան համայնքը, այլ նաև՝ Գետափ, Սպանդարյան, Մեղրաշեն համայնքները:



Այս համակարգը կարևոր հանգույց է, և Մեղրաշեն համայնքի հակակարկտային կայանի հետ կազմում է ցանց:

Ներկայումս մարզում կա 58 հակակարկտային կայան, որից 30-ը սահմանամերձ գոտում է, միևնույն է, միայն սահմանամերձ գոտում պահանջվում է 60 հակակարկտային կայան, քանի որ մարզի տարածք հիմնականում կարկտաբեր ամպերը ներթափանցում են այդ հատվածից:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՄՈԾԱԿՆԵՐՆ ԱՅԼԵՎԱ ՉԵՆ

ԱՆՀԱՆԳՍԱՑՆՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻՆ

Ջերմուկ քաղաքի տարածքում, մոծակների և խայթող այլ միջատների դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով, ՀՀ կառավարությունը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, 2015թ. առաջին կիսամյակում, պահուստային ֆոնդից հատկացրել է 15 մլն դրամ:

Մեր հանրապետությունում զբոսաշրջության զարգացման գործընթացում իր ուրույն տեղն ունի Ջերմուկ քաղաքը, որի հյուրերի քանակը շեշտակիորեն ավելանում է հատկապես ամռան ամիսներին: Եվ հենց այդ ամիսներին էլ քաղաքի բնակչությանը մտահոգող խնդիրներից մեկը մոծակների և խայթող այլ միջատների գանգալածային տարածվածությունն է: Միջատները հատկապես անհանգստացնում են երեկոյան ժամերին, երբ հովեկները դուրս են գալիս զբոսնելու: «Խնդրանքով դիմել էինք ՀՀ կառավարությանը, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն, նախկինում ևս դիմել էինք՝ քաղաքի կենտրոնական հատվածում, շուրջ



հիսուն հեկտարի վրա, աշխատանքներ կատարելու համար: Սակայն դա մեծ արդյունավետություն չէր ապահովում, քանի որ դժգոհություններ կային նաև առողջարանի հարակից տարածքներում: Այսօր, մեր խնդրանքով, պայքարի միջոցառումներ են իրականացվում 240 հեկտարի վրա, որպեսզի ամբողջությամբ ոչնչացվեն միջատները: Արդյունքներն ակնհայտ են»,- ասում է Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը: Միջոցառումներն իրականացնում է մրցույթը շահած «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, որն աշխատանքները, նախատեսված երկուսի փոխարեն, կատարել է երեք փուլով, յուրաքանչյուր փուլում ընդգրկելով 80 հա տարածք: Մասնագետների գնահատմամբ, դա նպաստել է աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: «Անցյալ տարի այդ ուղղությամբ պայքարի միջոցառումներ չեն տարվել: Բայց, քանի որ դեռևս 2013 թ. կատարած միջոցառումների արդյունավետությունը նկատելի էր, այս տարի ևս կառավարությունը միջոցներ տրամադրեց՝ պայքարի աշխատանքներ կատարելու համար: Ի դեպ, այս տարվա միջոցառումների ծավալը 2,5 անգամ ավելին է՝ նախորդից»,- նշում է ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Ավագյանը:

Բնակչությանը անհանգստություն չպատճառելու նպատակով, միջոցառումները կատարվել են գիշերային ժամերին, որոնք ավարտվել են մինչև առավոտյան ժամը ութը: Մեծ արդյունավետություն ապահովող հակամիջատային պատրաստուկով պայքարի աշխատանքներ են տարվել ցողարկման եղանակով՝ հատկապես բնական և արհեստական լճակների հարակից տարածքներում: «Մոծակները բազմանում են ճահիճներում և ավազներում, կանաչ տարածքներում, դրանց պոպուլյացիան տևում է յոթ օր, և մենք պայքարը կազմակերպում ենք այդ ժամանակահատվածում, որպեսզի արդյունավետությունը մեծ լինի»,- ասում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վայոց ձորի մարզային կենտրոն» մասնաճյուղի տնօրեն Խորեն Եղյանը:

Պայքարի նպատակով, MT3-80 մակնիշի տրակտորները հատկացրել են Վայոց ձորի և Արարատի ԳԱՄԿ-երը: Անանցանելի հատվածներում աշխատել են նաև ձեռքի սրակիչներով: Մոծակների և խայթող այլ միջատների դեմ պայքարի միջոցառումները, նախատեսված 15 մլն դրամի փոխարեն, կատարվել են շուրջ 9,5 մլն դրամով: Տարված աշխատանքներն արժանացել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Ջերմուկի քաղաքապետարանի մասնագետների և վերահսկող կազմակերպությունների դրական գնահատականին:

Մոծակներն այլևս չեն անհանգստացնում Ջերմուկի բնակիչներին ու զբոսաշրջիկներին: Այդպիսով, ապահովված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ առողջարանային քաղաքում բուժման և հանգստի լավագույն կազմակերպման համար:

Նելլի Սահակյան

ԾՐԱԳԻՐ

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՆԵՐԴՐՈՒՄ ԲԱՍԵՆ ԶԱՄԱՅՆՔՈՒՄ

Վերջերս UNDP կազմակերպության Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, համայնքի ակտիվ համագործակցությամբ, Շիրակի մարզի Բասեն համայնքը վերածվեց այլընտրանքային էներգիան լայնորեն օգտագործող համայնքի:

«Բիոտեխնոլոգիա» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, 2 տարի առաջ մեկնարկած ծրագրի արդյունքում, համայնքի մանկապարտեզին կից տեղադրվել է արեգակնային էներգիայով աշխատող՝ 16 կվտ/ժ հզորությամբ, 300 լիտր տարողությամբ ջրատաքացուցիչ, որը մանկապարտեզին ապահովում է մշտական տաք ջրով: Բացի այդ, հիմնադրվել է նաև 60 քառակուսի մետր մակերեսով ջերմատուն, որի բարիքներից օգտվում են համայնքի փոքրիկները: Սակայն ծրագիրը սրանով չի եզրափակվում. բասենցիների և անձամբ համայնքի ղեկավարի ակտիվ համագործակցության ու ծրագրին աջակցելու շնորհիվ, համայնքում այսօր արդեն գործածվում է 6 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով տարածք: Շիրակի մարզի Բասեն համայնքն օրինակ է ծառայում կալիֆորնիական որդերով կենսահումուսի արտադրման, որտեղ արտադրվող կենսահումուսն օգտագործվում է ջերմոցում: Բացի այդ, համայնքում տեղադրվել է նաև օդատաքացուցիչ և չորանոց, և այս ամենը այլընտրանքային՝ արեգակնային էներգիայով աշխատող: Զամայնքում կատարված ողջ աշխատանքը Շիրակի փոխմարզպետ Սեյրան Պետրոսյանին, ծրագրի ղեկավարին և համայնքի հյուրերին է ներկայացրել ծրագրի ղեկավար Գևորգ Պետրոսյանը, ով ծրագրի արդյունավետության ապացույցն համարում է ոչ միայն այն, որ այսօր տեղադրված ջերմատաքացուցիչների, ջերմոցի ու չորանոցի շնորհիվ թեթևացել է համայնքի հոգսը, այլ նաև այն, որ համայնքի 12 բնակիչ արդեն իրենք են տեղադրել ջերմատաքացուցիչներ: Ավելին, նմանատիպ ավելի մեծ չափերի հասնող սեփական ջերմոց ստեղծել է նաև համայնքի ղեկավարը: Ի դեպ, ժամանակի ընթացքում, ծրագրին տարբեր հարցերով միացել և համայնքին աջակցել են «Երրորդ բնություն», «Ֆերթի» հասարակական կազմակերպությունները: Ծրագրի ընդհանուր արժեքը 33 հազար 900 դոլար է: «Բավական լուրջ արդյունքների ենք հասել: Նախ կարողացանք այն կարծրատիպը, կոտրել, որ Շիրակի մարզում ջերմոց ղեկն անարդյունավետ է: Կարողացանք ապացուցել, որ ներդրումների դեպքում և աշխատանքի շնորհիվ ամեն ինչ հնարավոր է: Մենք արդեն ունենք այլընտրանքային էներգիայի նոր աղբյուր՝ ջերմային պոմպը,



վում: Բացի այդ, այն ավելի ապահով է: Ծրագրի ղեկավարը նաև դրա հաջողությունը կապել է համայնքի ներդրման հետ: Այս համակարգի միակ բացասական կողմն այն է, որ սկզբնական պահանջում է բավական մեծ գումար՝ համակարգը տեղադրելու համար, բայց շահագործման ավելի ապահով, ավելի արդյունավետ տարբերակ է, հատկապես Բասենի նման գյուղական համայնքում, որը գազաֆիկացված չէ և հույսը միայն էլեկտրականության վրա է: Զամայնքի ներդրումը շատ կարևոր է: Եթե յուրաքանչյուր մեր տան մեջ չփորձենք վերականգնել կամ նորոգել, ապա հարևանը չի անի: Այսօր համայնքում, ի տարբերություն շատ վայրերի, արտագաղթ գրեթե չկա, երիտասարդները մնում են ու ընտանիք են կազմում գյուղում: Գյուղում կա հնարավորություն, գյուղացին պետք է զբաղվի հողով, գյուղը կառուցվում է գյուղով ու գյուղի մարդկանցով», - նշել է համայնքի ղեկավար Զամյետ Պետրոսյանը: Բասենն ունի 463 ծուխ՝ 1780 բնակիչ: Գյուղը գազաֆիկացված չէ, հողերն էլ անջրդի, սակայն անմշակ հողեր համայնքում չկան:

Արմենուհի Մխոյան

ԱՄՔՈՐՆ ԱՉԱԿՑՈՒՄ Ե ԽԱՉԱՐՁԱՆ ԶԱՄԱՅՆՔԻ ԿԱՆԱՆՑ

Տավուշի մարզի Խաչարձան համայնքում ԱՄՔՈՐ (UMCOR) կազմակերպության աջակցությամբ, 2015 թ-ի օգոստոսին ստեղծվեց կանանց խումբ, ովքեր այսուհետ կզբաղվեն բարձրարժեք մշակաբույսերի մշակությամբ:

Մինչ 1988 թ. Խաչարձան համայնքը կոչվել է Փոլադ: 1989թ. համայնքը վերանվանվել Խաչարձան: Բնակչության հիմնական զբաղմունքը եղել է մնում են հողագործությունն ու անասնապահությունը: Այս ծրագրի շրջանակներում «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպությունը Խաչարձան համայնքի կանանց ֆերմերային խմբին է տրամադրել բարձրարժեք մշակաբույսերի սերմեր, ինչպես նաև գյուղատնտեսական գործիքներ և անհրաժեշտ գրականություն: Մեծ է կանանց ոգևորությունը: Ինչպես խմբի անդամներն, այնպես էլ ծրագրին մասնակցող մասնագետները համոզված են, որ UMCOR-ի այս ծրագիրը նոր դռներ կբացի համայնքի կին ֆերմերների առջև և կստեղծի միավոր տարածքից ավելի մեծ եկամուտներ ստանալու հնարավորություն:

Ծրագրի շրջանակներում հաճախակի են կազմակերպվում դասընթացներ և դաշտային օրեր, որոնց ընթացքում խմբի անդամներին ներկայացվում են բարձրարժեք և արդյունավետ գյուղատնտեսության վարման գաղտնիքները: Ուսուցումը կազմակերպվում է «Սովորիր՝ կատարելով» սկզբունքով, ասել է թե՛ կանայք նոր գիտելիք և հմտություններ են ձեռք բերում գործնական պարապմունքների և աշխատանքի ընթացքում:

«Կանաչ արահետ» ՀԿ

ՄԵՂՎԱԲՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂՎԱԲՆՈՒԹՅԱՆ ԻՋՏՆԱԿՆԵՐԻ ԱՇՆԱԿԱՅԻՆ ԽՆԱԿՄՔՆ ԵՎ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմաններն այնպիսին են, որ մեղվաբնտանիքները պետք է պահել, այսպես ասած, տեղափոխման եղանակով:

Գարնանը հյուսիսային տարածքներից մեղվաբնտանիքները պետք է իջեցնել հարավային շրջաններ, որտեղ պտղատու այգիներ կան, այնուհետև նախալեռնային գոտի և նոր բարձրացնել լեռնային վայրեր: Վաղ գարնանը, երբ պտղատու այգիներն ու բանջարաբոստանային մշակաբույսերը ծաղկած են, առկա են ծաղկափոշոտումն ու նեկտարը, մեղվի զարգացումն ընթանում է արագորեն, ուժեղանում են մեղվաբնտանիքները, ինչն արդեն հարուստ մեղրաբերքի նախապայման է: Ուժեղ մեղվաբնտանիքներն ամեն դեպքում երաշխիք են ապրանքային մեղրի ստացմանը: Բացի մեղրաբերքից, խաչածն փոշոտման միջոցով, 4-5 անգամ բարձրանում է նաև պտղատու այգիների բերքատվությունը:

Հանրապետության դաշտերում սակավ են ցանովի նեկտարատու խոտաբույսերը: ՌԴ-ում մեկ մեղվաբնտանիքից ստանում են 40-60 կգ և ավելի ապրանքային մեղր, քանի որ հարյուրավոր հեկտարներով ցանվում են հլածուկ (ռապս), կորնգան, առվույտ, երեքուկ, եգիպտացորեն, արևածաղիկ, որոնք պայմաններ են ստեղծում մեղվի մինչև 3-4 վերնահարի ուժեղ զարգացմանը և գլխավոր մեղրաբերքի ժամանակաշրջանի բավականին երկարացմանը: Մեզ մոտ գլխավոր մեղրաբերքի շրջանը տևում է 12-ից 15 օր: Եթե մինչև այդ չկան զարգացած մեղվաբնտանիքներ, ապա կորսվում է մեղրաբերքը, նամանավանդ, եթե այդ օրերն ուղեկցվում են երաշտով կամ հորդառատ անձրևներով:

Կերպաշարի լրացման աշխատանքների արագացման դեպքում դրանք չպետք է ուշացնել, որպեսզի մեղուները ձմեռանոց գնալուց առաջ ծերացած չլինեն, քանի որ սեզոնի ընթացքում, ակտիվ աշխատանքի ժամանակ մեղուների կյանքի տևողությունը 40-50 օր է: Իսկ ձմեռացման ժամանակ, պասիվ դեպքում, երբ ենթարկվում են չորացման, դիմանում են 3-4 և ավել ամիս:



Հաշվարկված է, որ մեկ մեղվաբնտանիքը, 1 կմ հեռավորություն անցնելու դեպքում, ծախսում է 200-300 գ մեղր: Որքան հեռու է թռիչքը, այնքան շատ է ծախսը: Լավ կլիմայի, որ մեր հանրապետության գյուղացիական տնտեսություններն իրենց դաշտերը ցանեն մեղրատու մշակաբույսերով, ինչպիսիք են՝ հլածուկը, կորնգանը, արևածաղիկը և այլն: Դրանով մեղուները ապահովված կլինեն նեկտարով և ծաղկափոշով: Մեծ նշանակություն ունեն ժամանակին կատարվող բուժական արգելիչ միջոցառումները: Վարրոատոզ հիվանդության նկատմամբ անմիջապես պետք է կատարել բուժման աշխատանքներ՝ ֆուրսան, ապիդեզ, ամիպոլ, թրթնջկաթուն և այլ ակարացիոզ պատրաստուկներով՝ համաձայն անասնաբուժական սանիտարական հրահանգի: Այնպես անել, որ ձմեռանոց գնացող մեղուները լրիվ տգաթափված չլինեն: Կերակրումները կատարելիս, կանխարգելիչ նպատակով, շաքարաջրին ավելացնել նոգեմացիոզ կամ նոգեմատ, մեկ անգամ, 20 լիտր շաքարաջրին խառնելով 5 գրամ նոգեմացիոզ:

Ավելորդ մեղրահացերը, որոնք չեն պատվում մեղրով, հանել, կատարել խոտացումներ և տալ տաքացումներ: Ձմեռանոցային շենքը պիտանալ, կրծողների դեմ կատարել պայքարի աշխատանքներ: Պահեստավորման ենթակա մեղրահացերը դնել վերնահարկերի մեջ՝ իրարից 2 սմ հեռավորության վրա: Ցեցի թրթուրներից պահպանելու համար օգտագործել քացախաթթվի 30%-ոց լուծույթ՝ կողքը դնելով և մեջը զցելով թանգիֆից ծծիչ կամ ծխարկել ծծմբի ծխով: Ոչ պիտանի մեղրահացերը և մոմը հալել, վերածել կոշտ մոմի ու պահեստավորել: Ինչպես մեղրահացերը, այնպես էլ մոմանյութերը պահեստավորել սառը պայմաններում, այնպես որ 8°C-ից բարձր չլինի, որովհետև տաքությունը նախապայմաններ է առաջացնում մոմի ցեցի զարգացման համար:

«Մուլտի-Ագրո» գիտաարտադրական կենտրոնում առկա են մեղրատու մեղուների Հայաստանում տարածված բոլոր տեսակի հիվանդություններին դեմ օգտագործվող դեղանյութերը, մեղվաբուժական գույք և գործիքներ:

Ռ. Ծառուկյան

«Մուլտի-Ագրո» գ/ա կենտրոնի գլխավոր տնօրեն Յ. Զաղարյան գլխավոր անասնաբույժ

ԱՆՏԱՌՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենտրոնական և հարավային անտառտնտեսական մարզերում անտառները ոչ թե համատարած զանգված են կազմում, այլ՝ առանձին կղզյակներ: Կլիմայի փոփոխության հետ կապված՝ այստեղ սպասվում է անտառի աճման որոշ պայմանների վատթարացում անտառի ստորին սահմանի երկարությամբ (1450-1550 մ): Ենթադրվում է, որ անտառային տարածքներ կներխուժեն տափաստանային և կիսաանապատային առավել ակտիվ բույսերի տեսակներ, ինչը կարող է հանգեցնել այդ շրջանների 1700 հա (3%) անտառային մակերեսների կորստի: Միջին բարձրություններում (2300 մ-ից մինչև 2500-2700 մ) սպասվում է, որ անտառի աճման պայմանները կբարելավվեն, որի հետևանքով անտառային Էկոհամակարգերի տարածքը կընդլայնվի լեռնային պրոֆիլով դեպի վեր:

Հարավ-արևելյան անտառտնտեսական մարզում նույնպես խոցելի կլի-

մանդությունների զանգվածային տարածման և հրդեհավտանգավորության ավելացման հետևանքով:

Ելնելով տերակներ միջատների կենսաբանական առանձնահատկություններից՝ կարելի է ենթադրել, որ կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում նրանց զանգվածային զարգացման տարածքն ավելի քան 2 անգամ կընդլայնվի և կհասնի 70-75 հազ. հա-ի: Ընդ որում՝ առավել խոցելի կլիման հարավ-արևելյան անտառապատ շրջանի անտառները: Կլիմայի սպասվող չորայնության ավելացման հետ կապված սպասվում է նաև անտառային հրդեհների ինտենսիվության աճ: Այդ վտանգն ավելի շատ սպառնում է կենտրոնական, հարավային և հարավ-արևելյան անտառապատ շրջանների անտառներին:

Հայաստանի բոլոր անտառապատ շրջաններում ներկայումս զգալի տարածքներ են զբաղեցնում դեգրա-



նեն անտառներն իրենց աճման ստորին սահմանի երկարությամբ (600 մ սկսած): Անտառի աճման պայմանների վատթարացումից բացի, սպասվում է կիսաանապատային բույսերի տեսակների ինտենսիվ ներխուժում՝ դեպի անտառային տարածքներ: Որպես արդյունք՝ սպասվում է 5600 հա (8%) անտառային տարածքների կորուստ: Ակնկալվող ջերմաստիճանի բարձրացումը և տեղումների քանակի նվազումը բացասաբար կանդրադառնան անտառների սերմնային վերականգնման վրա: Վերին սահմանով (2600 մ և բարձր) հնարավոր է անտառային Էկոհամակարգերի աննշան բնական ընդլայնում՝ մարգագետնային Էկոհամակարգերի հաշվին:

Կլիմայի փոփոխության սցենարների իրականացման դեպքում անտառի աճման պայմանների վատթարացման հետևանքով, կարող է անհետանալ ավելի քան 17 հազ. հա անտառ (5-5.5%): Մյուս կողմից, անտառի վերին գոտում անտառի աճման պայմանների բարելավումը կնպաստի լեռնային պրոֆիլով դեպի վեր անտառածածկ տարածքների ընդլայնմանը: Սակայն ներկայումս տնտեսական գործունեությունը, և առաջին հերթին մերձալպյան մարգագետինների, որպես արոտավայր և խոտհարք ինտենսիվ օգտագործումը, անտառային Էկոհամակարգին այդ ուղղությամբ շարժելու հնարավորություն չի ընձեռում:

Կլիմայի սպասվող փոփոխությունը կարող է անտառային Էկոհամակարգերի վրա բացասաբար անդրադառնալ նաև սանիտարական պայմանների վատթարացման, վնասատուների և հի-

դացված, բնական վերականգնման անընդունակ անտառային Էկոհամակարգերը: Ելնելով դրանից՝ հարմարվողականության առաջնահերթ միջոցառումները պետք է ուղղված լինեն այդ Էկոհամակարգերի վերականգնմանը և դրանց հարմարվողականության ներուժի բարձրացմանը:

Ըստ Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՄՄ)՝ կլիմայի փոփոխության սցենարների և վերլուծության՝ կլիմայի միջին սցենարի համաձայն Հայաստանում մինչև 2020-ական թվականները ջերմաստիճանը կբարձրանա 1.6 °C-ով, մինչև 2030-ականները՝ 2.2°C-ով, իսկ մինչև 2040-ականները՝ 2.6°C-ով, իսկ մթնոլորտային տեղումները կնվազեն համապատասխանաբար 5, 14 և 10 տոկոսով: Տեղումների նվազումն ակնկալվում է, որ ամենախիստը կլինի ամռան ամիսներին:

Կանխատեսվում է նաև, որ կփոփոխվի ջրային ռեսուրսների մատչելիությունը: Գետային հոսքն ակնկալվում է, որ մինչև 2030 թվականը կնվազի 6.7, մինչև 2070թ.՝ 14.5 և մինչև 2100 թ.՝ 24.4 տոկոսով՝ 1961-1990 թթ. ելակետային ժամանակահատվածի համեմատ: Ձևածածկույթն ակնկալվում է, որ նշված ժամանակահատվածներում համապատասխանաբար կկրճատվի 7-11, 16-20 և 20-40 տոկոսով:

Ալբերտ Մարկոսյան

«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակից, Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿԱՂԱՄԲԻ ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԴՐԱՆՑ ԴԵՄ

Կաղամբը, շնորհիվ արժեքավոր քիմիական կազմի, դասվում է կարևոր սննդամթերքների շարքին: Մեր հանրապետությունում կաղամբի ցանքատարածությունները, յուրաքանչյուր տարի զգալիորեն տուժում են վնասատուներից, հատկապես կաղամբի ցեցից, կաղամբի ճերմակաթիթեռից, կաղամբի բվիկից և կաղամբի վիճից, որոնց պատճառով զգալիորեն նվազում է բերքատվությունը, իջնում որակը: Վնասակար օրգանիզմների դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է ճանաչել, ծանոթանալ դրանց կենսակերպին ու հասցրած վնասի բնույթին: Ստորև տրվում է տեղեկատվություն կաղամբի առավել վտանգավոր վնասատուների կենսակերպի և դրանց դեմ կիրառվող շրջակա միջավայրի համար համեմատաբար անվտանգ ժամանակակից պատրաստուկների վերաբերյալ:

Վնասակար միջատների նկարագիրը

Կաղամբի ցեցի թիթեռը փոքր է՝ 5-6 մմ երկարությամբ, նեղ, դարչնագույն առաջնային և հետևի ծոպավոր, գորշազույն թևերով: Հասուն թռչունները կանաչ են, իլիկաձև, մարմնի առջևի և հետևի մասում՝ նեղացված: Դրանց երկարությունը կազմում է 9-12 մմ: Շատ շարժուն են, անշան հպման դեպքում գալարվելով, կծկվում են և տերևներից իջնում մետաքսանման սարդոստիկով: Ձեռքի մեջ պահելիս գալարվում են օձի նման: Թռչուններն իրենց գույնով շատ նման են կաղամբին, դրա համար էլ աննկատելի են մնում:

Ձմեռում են հարսնյակները՝ կաղամբակոթի, բույսերի մնացորդների կամ մուլախոտերի վրա: Թիթեռի թռիչքը

ը միմյանցից չեն սահմանազատվում, ուստի միաժամանակ կարելի է հանդիպել վնասատուի զարգացման տարբեր փուլերի:

Ցեցը մեծ վնաս է հասցնում հատկապես ամառվա կեսերին՝ հատկապես շոգ և չոր ժամանակ: Կաղամբի ցեցի դեմ պայքարի աշխատանքները դառնում են նպատակահարմար, երբ կաղամբի ցանքատարածության ոչ պակաս քան 10%-ը բնակեցված է ցեցի 2-5 թրթուրով:

Կաղամբի ճերմակաթիթեռ

Բավականին մեծ, սպիտակավուն, առջևի թևերը սևով երիզված թիթեռ է, եզի առջևի թևերի վրա կան երկուական սև կլոր բծեր: Արուի թևերի բացվածքը 55 մմ է, էգինը 60 մմ:

Հայաստանում տարածված է ամենուրեք: Վնասում է կաղամբին, շաղգամին և խաչածաղկավոր այլ բույսերի: Ձմեռում է հարսնյակ վիճակում: Ծառերի բներում, ցանկապատերի, նաև դաշտում՝ կաղամբի մնացորդների վրա: Մարտ-ապրիլ ամիսներին սկսվում է թիթեռների թռիչքը: Ձվերը դրվում են կերպուսների տերևների ստորին երեսում՝ միաշերտ կույտերով: Յուրաքանչյուր կույտում լինում է 15-140 ծու, մինչդեռ էգի պտղաբերությունը հասնում է մոտ 250-300 ձվի: Ձվերը դեղնավուն են ու եզրավորված:

Սաղմնային զարգացումը տևում է 4-10 օր: Թրթուրները մոխրա-կանաչավուն են, գորշ գույնի գծերով և կետերով: Մաշկափոխվում են 4 անգամ և ունենում 5 հասակ: Բարձր հասակի թրթուրների չափերը հասնում են մինչև 4 սմ: Մեկ հերթի դրված ձվերից դուրս եկած թրթուրները միասին ապրում են մինչև 2-րդ հասակ, իսկ 3-4 հասակում ցրվում են ու ապրում առանձին-առանձին:

Սևվելիս թրթուրները մետաքսի գոտիով իրենց ամրացնում են սուբստրատին և հարսնյակավորվում: Հարսնյակը կանաչ-դեղնավուն է: Առաջին և երկրորդ սերնդի հարսնյակները խոշոր են երրորդ և չորրորդ սերնդի հարսնյակներից: Վնասատուն տարեկան զարգացնում է 3-4 սերունդ: Կաղամբի ճերմակաթիթեռի դեմ պայքարի աշխատանքները դառնում են նպատակահարմար, երբ ցանքատարածություններում բույսերի ոչ պակաս քան 5%-ը բնակեցված են ձվակույտերով կամ թրթուրների խմբերով:

Կաղամբի բվիկ

Վնասատուն Հայաստանում մեծ տարածում ունի: Բվիկի թիթեռը մուգ գորշավուն է, առջևի թևերի վրա կան մուգ գծեր և երկու բիծ՝ սպիտակ կետերով: Թևերի բացվածքը 5 սմ է: Ձվերը կիսագնդաձև են և ունեն դեղնականաչավուն երանգ: Թրթուրների գույնը տարափոխվում է կանաչից մինչև գորշ կանաչավուն, կամ մինչև գորշ դարչնագույն: Դրանց մարմնի կողքի երկայնքով անցնում է դեղնավուն լայն շերտ: Հասակավոր թրթուրի երկարությունը մինչև 5 սմ է: Հարսնյակը ողորկ է, փայլուն, կարմրագորշ, ունի մինչև 2,5 սմ երկարություն: Հարսնյակը ձմեռում

է հողի մեջ: Թիթեռի թռիչքը տեղի է ունենում մայիսից-հունիս: Բեղմնավորված էգը ձվերը դնում է 30-80, երբեմն մինչև 200 հատ մեկ շերտի կույտով:

Սաղմնային զարգացումը տևում է 10-15 օր: Առաջին հասակի թրթուրները առանց ցրվելու ապրում են խմբերով, իսկ մեծանալիս՝ առանձնանում են: Թրթուրը բազմակեր է, վնասում է խաչածաղկավորներին, ինչպես նաև՝ ճակն-

են 4 անգամ և ձևափոխվում կուսածին էգ հիմնադիրների (բարենպաստ պայմաններում՝ մաշկափոխություններն ավարտվում են 10-15 օրում և թրթուրներն այդ ընթացքում վերածվում են հասուն վիճակի): Վերջիններս կուսածին եղանակով ծնում են թրթուրներ, որոնցից զարգանում են էգ կուսածինները:

Էգ կուսածինները կուսածնորեն



դեղը, սոխը, արևածաղիկը, սիսեռը և մշակովի այլ բույսեր, սակայն ավելի շատ՝ կաղամբը: Սևվելիս թրթուրները գերադասում են կաղամբի ամենաերիտասարդ տերևները, որոնցում անկանոն անցքեր են բացում: Աճման կոնոլ սևվելիս կաղամբը գլուխ չի կապում, իսկ կաղամբի ձևավորված գլուխներում բացում են միջանցքներ, աղբոտում կղկղանքներով և սնման համար կաղամբը դարձնում ոչ պիտանի: Թրթուրների զարգացումը տևում է 45-60 օր, որի ընթացքում վնասատուն անցնում է 6 հասակ: Սնուցումն ավարտվելուց հետո վերջին հասակի թրթուրները հողում հարսնյակավորվում են: Վնասատուն տարեկան տալիս է 1-2 սերունդ:

Կաղամբի բվիկի դեմ պայքարի աշխատանքները դառնում են նպատակահարմար, երբ կաղամբի ցանքատարածությունում բույսերի ոչ պակաս քան 5-10%-ը բնակեցված են 1-3 թրթուրով:

Կաղամբի վիճ

Հայաստանում տարածված է ամենուրեք, ուր մշակվում է կաղամբը: Կաղամբի վիճը, բացի կաղամբից բազմանում է նաև շաղգամի, բողկի, ծաղկակաղամբի, մանանեխի վրա:

Լվիճի անթև կուսածին էգն ունի մոխրասպիտակավուն մոմափոշով ծածկված ձվաձև մարմին, որի երկարությունը 1,9-2,3 մմ է: Թևավորի կուսածին էգն ունի երկու գույզ թևեր և անթև էգից տարբերվում է նաև բարեկազմ փորով: Մարմնի երկարությունը 2,2 մմ է: Ունի դարչնականաչավուն երանգ:


Լվիճի սեռակիր էգն անթև կուսածին էգից տարբերվում է մարմնի ավելի փոքր չափով (երկարությունը՝ 1,7 մմ) ու այլ ձևով (հետևի ոտքերի սրունքները խիստ հաստացված են): Ձմեռում է ձվի փուլում՝ դաշտում մնացած կաղամբակոթուներին ու խաչածաղկավոր բազմամյա մուլախոտերի վրա: Գարնանը ձմեռող ձվերից դուրս եկած թրթուրները սևվելով խաչածաղկավոր բույսերի (որոնց վրա անցկացվել է ձմեռելու փուլը) հյուսված մաշկափոխվում

բազմանում են՝ ծնելով մինչև 40 թրթուր, որոնք իրենց հերթին (մաշկափոխություններից հետո) դարձյալ վերածվում են կուսածին էգերի: Ծնված թրթուրները բույսերի վրա առաջացնում են նվազ շարժունակ վիճների կուսակումներ (գաղութներ): Աճման կեսերին, երբ տերևները կոշտանում են, անթև կուսածինները ծնում են թրթուրներ, որոնցից դուրս են գալիս անթև և թևավոր կուսածիններ: Վերջիններս թռչում գնում են կաղամբի և այլ կուլտուրաների վրա խաչածաղկավորների վրա և այնտեղ հիմնում են գաղութներ: Բազմացման արագ տեմպերի շնորհիվ, կարճ ժամանակահատվածում վիճների քանակությունը կաղամբի տերևների վրա հասնում է հսկայական չափերի (մինչև մի քանի հարյուրի) և նրա գաղութները բույսերի բոլոր տերևները ծածկում են երկու կողմից: Թե հասունները և թե թրթուրները բույսերի հյուսված ծծելով, նրանց հյուսված մահացնում են: Աշնանը, ցրտերն ընկնելուն պես, ի հայտ են գալիս էգ սեռակիրները, որոնց ծնած թրթուրներից ձևավորվում են արու և էգ վիճներ (տարասեռեր): Բեղմնավորված էգը հատուկապես դնում է 3 ծու՝ ամենից լավ պաշտպանված տեղերում (ցողունների խոռոչներում, բերքահավաքից հետո դաշտում մնացած տերևների ցածի երեսին և այլն): Ձուն երկարավուն ձվաձև է (երկարությունը՝ 0,5 մմ), որի մի ծայրը մյուսի համեմատ քիչ է ուռուցիկ: Այսպիսով, կաղամբի վիճը մինչև աշնան վերջը (սոյեմբեր) բազմանում է կուսածնությամբ թրթուրներ ծնելով: Ձվադրությունը կատարվում է միայն սեռակիրների կողմից աշնանը ծնած բեղմնավորված էգը: Աճման ընթացքում կաղամբի վիճը տալիս է մինչև 16 սերունդ: Վնասատուի դեմ պայքարի աշխատանքները դառնում են նպատակահարմար, երբ կաղամբի ցանքատարածության 5-10%-ը բնակեցված է վիճի մանր գաղութներով:

Շարունակելի

Մասիս Սարգսյան,

կենսաբանական գիտությունների դոկտոր



1. Ձվակույտ 2. Թրթուր 3. Կաղամբի ճերմակաթիթեռ

քը սկսվում է վաղ գարնանից, շարունակվում ամբողջ վեգետացիայի ընթացքում: Առաջին սերնդում կաղամբի ցեցը զարգանում է մեծ մասամբ մուլախոտերի վրա, երկրորդ սերնդից՝ մշակովի բույսերի վրա: Չուգավորվելուց հետո թիթեռները դնում են 80-300 ծու կաղամբի կամ խաչածաղկավոր մուլախոտերի տերևների ստորին երեսների վրա, շղերի երկարությամբ հատ-հատ, կամ 3-5 հատ (փոքր խմբերով): Ձվերը փոքր են (0,4 - 0,5 մմ), տափակ և բաց դեղնավուն: Մի քանի օրից հետո ձվերից դուրս եկած թրթուրները սկսում են կրծել տերևների մաշկը և մտնում դրա հյուսվածի շերտի մեջ: Արդյունքում, տերևների վրա բացվում են անցքեր:

Թրթուրների զարգացումը տևում է 1,5-2 շաբաթ, որից հետո հարսնյակավորվում են սպիտակ բոժոժում: Հարսնյակի զարգացումը տևում է շուրջ 15 օր: Կաղամբի ցեցը սովորաբար տարեկան տալիս է 5-6 սերունդ: Այդ սերունդներ

ՀԵՏԱԲՈՒՔԻՐ Է...

ՓՇՈՏ ՀԱՂԱՐՋԵՆԻ

Փշոտ հաղարջենին հաղարջենի թագավորության ամենաօգտակար ներկայացուցիչներից է: Այս փշոտ թուփը դեռևս XI դարում աճեցրել են վանքերի այգիների մեջ: Իսկ XV դարում Իվան 3-րդ ցարի ժամանակ այն հասավ նաև Ռուսաստանի Դաշնություն: Հետագայում լայն տարածում է գտել Եվրոպայում: Փշոտ հաղարջենու պտուղները լինում են սպիտակ, կանաչ, մուգ կարմիր և նույնիսկ սև գույնի:



Այս հատապտուղը ոչ միայն համեղ է, այլև՝ շատ օգտակար, արժեքավոր հատկություններ ունի՝ հատկապես վառ կանաչ, գմրուխտագույն պտուղը: Սննդի մեջ օգտագործվում է թարմ վիճակում, իսկ մթերման դեպքում օգտագործվում է հասունացման տարբեր փուլերում: Փշոտ հաղարջենու պտուղները հարուստ են դյուրամարս միկրո և մակրոտարրերով: Վիտամին C-ի պարունակությունը պտուղների հասունացման շրջանում նվազում է: Պտուղներն օգտագործվում են ավիտամինոզի դեպքում, ինչպես նաև՝ արյունատար անոթների ամրապնդման նպատակով: Այս հատապտուղը կարգավորում է զարկերակային ճնշումը, հիպերտոնիկների մոտ թեթևակի իջեցնում է զարկերակային ճնշումը, իսկ հիպոտոնիկների մոտ, ընդհակառակը՝ բարձրացնում է այն: Փշոտ հաղարջենու պտուղներն ունեն ցավազրկող, միզամուղ հատկություններ: Այն հայտնի է նաև հակաուռուցքային ազդեցությամբ: Ավելորդ քաշի դեպքում (որպես հիմնական մթերք՝ բենաթափման) անհրաժեշտ է օրվա ընթացքում (1-2 շաբաթ ժամկետով) օգտագործել 100-300 գրամ պտուղներ: Փշոտ հաղարջը վիտամինների և հանքային նյութերի հարուստ աղբյուր է: Օրգանիզմի մեջ պղնձի և ֆոսֆորի պակասը կարելի է լրացնել սննդի մեջ փշոտ հաղարջենու հատապտուղներն ընդգրկելով: Հատկապես խորհուրդ է տրվում երեխաներին և տարեցներին, որոնք սակավարյունությամբ են տառապում, և ովքեր օրգանիզմում ֆոսֆորի և պղնձի պակաս ունեն: Որպես միզամուղ և լուծողական միջոց՝ կարելի է օգտագործել փշոտ հաղարջենու եփուկը: Պատրաստման համար անհրաժեշտ է 1 ճաշի գդալ պտուղների վրա լցնել 200 մլ եռջուր 10 րոպե եռացնել գոլորշու վրա (ջրային բաղնիք): Թրմել 15 րոպե: Քամել թանգիֆով և խմել օրը 4 անգամ՝ 1/4-ական բաժակ: (ընպելիքը կարելի է քաղցրացնել մեղրով կամ մուրաբայի հյութով):

Հակացուցված է ստամոքսի խոց, դիարեա հիվանդությունների դեպքում: Այս եփուկը կարելի է օգտագործել քրոնիկ փորկապության ժամանակ՝ որպես թույլ լուծողական և ցավազրկող միջոց: Բուժման ժամկետը՝ 2 շաբաթ: Ժողովրդական բժշկության մեջ փշոտ հաղարջենին օգտագործվել է մրսաձուլության հետևանքով առաջացած հիվանդությունների, ինչպես նաև մաշկային խնդիրների դեպքում: Հին ժամանակներում կոկորդի բորբոքումների դեպքում փշոտ հաղարջենու թարմ հյութը խառնել են փոքր քանակությամբ մեղրի հետ և օգտագործել որպես հակաբորբոքային միջոց: Իսկ սուր բնույթի մաշկային բորբոքումները (ցան, այրվածքներ, որոնք առաջացել են թունավոր ծաղիկներից) հնում բուժում էին հատուկ հատապտուղների թարմ հյութը քամելով: Հատապտուղի թարմ հյութը նպաստում է օրգանիզմի ծանր մետաղների աղերի հեռացմանն ու ճառագայթման ենթարկված հիվանդներին ազատում է դրա ազդեցությունից: Ռուս հայտնի կենսաբան, Ի. Վ. Միչուրինը փշոտ հաղարջենին անվանել է «հյուսիսային խաղող»: Պտուղների մեջ պարունակվում են մինչև 60 մգ % C, B խմբի վիտամիններ, A նախավիտամին, մինչև 15 % շաքար, կալիում, յոդ, նատրիում, ցինկ, կոբալտ, մարգանց, երկաթ, կալցիում, պղինձ և շատ քանակությամբ ֆոսֆոր և ֆոլաթթու, օրգանական թթուներ՝ խնձորային և կիտրոնային, P վիտամին: Սակավարյունությանը և տառապողների խորհուրդ է տրվում ավելի հաճախ այս պտուղն օգտագործել: Ֆոլաթթուն արյունաստեղծ հատկությամբ է օժտված: Փշոտ հաղարջը լեղազատիչ և խլիստերինի քանակը նվազեցնող հատկություն ունի, ամրացնում է արյան մազանոթները, P-ակտիվ միացությունների շնորհիվ օգտակար է հիպերտոնիայի, աթերոսկլերոզի և այլ սիրտ-անոթային հիվանդությունների բուժման համար: Պտուղը և տերևներն օգտագործվել են որպես հակաուռուցքային միջոց: Էկզեմայի և մաշկային այլ հիվանդությունների դեպքում փշոտ հաղարջ պետք է մշտապես օգտագործել: Հաղարջի թարմ պտուղի մեծ քանակությամբ օգտագործումն օգնում է ազատվել միզապարկի և երիկամների բորբոքումներից և քարերից: Ճարպակալման և նյութափոխանակության խանգարումների ժամանակ անհրաժեշտ է 3-4 շաբաթվա ընթացքում մեծ քանակությամբ փշոտ հաղարջի թարմ պտուղներ օգտագործել: Սակավարյունության և նյարդային գրգռվածության դեպքում անհրաժեշտ է 2 ճաշի գդալ պտուղները 25 մլ եռջուրով եփել 10 րոպե, թրմել 2-3 ժամ: Բուժիչ եփուկին կարելի է մաքուր մեղր ավելացնել և օրվա ընթացքում օգտագործել որպես սովորական ընպելիք:

ԵՐԵԿՕՐՆԻԿ ՊԱՐՄԿԱԿԱՆ

Երեկոնիկը (լատ.՝ Hesperis) կաղամբագգինների խաչածաղկավորների ընտանիքի երկամյա խոտաբույս է: Այն այգեպաններին ավելի հայտնի է հեսպերիս անվամբ, որը հունարենից թարգմանաբար նշանակում է գիշերային, երեկոյան: Ծաղկի մյուս անուններն են գիշերային մանուշակ, գիշերային մապրոնա, երեկոյիկ կովկասյան, կանացի հեսպերիս: Սրանցից առավել տարածվածը գիշերային մապրոնան է: Հնագույն ժամանակներում ծաղիկն այդպես է անվանվել այն պարճառով, որ ավելի հոտավետ է դարձել երեկոյան և գիշերային ժամերին: Յերեկային ժամերին այն հոտ գրեթե չունի, իսկ երեկոյան այն բուրբոն է նույնիսկ 10 մ հեռավորության վրա, շատ հաճախ՝ խոնավ ու ջերմ եղանակներին:



Հեսպերիսը մտնում է այն բույսերի խմբի մեջ, որոնց մասին նկարագրությանը կարելի է հանդիպել առաջին գրավոր բուսաբանական աղբյուրներում: Հայրենիքը համարվում է Ասիան և Եվրոպան: Եվրոպայում երեկոնիկ սկսել են մշակել 16-րդ դարի կեսերին: Հատկանշական է, որ այն եղել է ֆրանսիական թագուհի Մարիա Անտուանետայի ամենասիրած ծաղիկը: ԱՄՆ-ում գիշերային մանուշակի ծաղիկները հայտնվել են 17-րդ դարում, իսկ ՌԴ-ում՝ հայտնի է դառնում 18-րդ դարի կեսերին: Դարեր առաջ, երբ զարգացած էր միայն տեղական բույսերի մշակությունը, շատ հաճախ այգիներում աճեցվել են երեկոնիկներ, ոչ այնքան գեղեցկության, որքան՝ հոտավետության համար: Տարածված է գրեթե բոլոր մարզերում: Աճում է անտառներում, մարգագետիններում, թփուտներում, քարքարոտ լանջերում, բնակավայրերում:

Յողունը պարզ է, ճյուղավորվող՝ գեղձալի մագիկներով պատված, բարձր՝ 30-120 սմ: Տերևները հերթադիր են, սղոցաեզր: Ծաղկաբույլը հասկանման ողկույզ է, ծաղիկները՝ դեղնագույն, սպիտակ, բաց մանուշակագույն, վարդագույն: Ծաղկում է մայիս-հունիսին: Պտուղը երկար-գծաձև բացվող կամ չբացվող պատիճ է: Սերմերը յուղատու են, պարունակում են սապոնիններ, եթերայուղեր, ճարպեր, ֆլավոնոիդներ, ալկալոիդներ և այլն: Տերևների և սերմերի պատրաստուկները միզամուղ և քրտնաբեր են: Սննդի մեջ օգտագործվում են աղցաններ պատրաստելիս: Բույսի ճիշտ աճեցման պայմանները Ծաղկի աճեցման համար անհրաժեշտ է բարեբեր և խոնավ պայմաններ ստեղծել: Թթու և չոր հողերը վանում են բույսին: Դրանք դառնում են փոքր, պակասում է ծաղկման ու փթթման ինտենսիվությունն ու երկարակեցությունը: Արմատները խորաթափանց չեն: Մշակվող հողի խորությունը 15 սմ է: Տնկման վայրը ցանկալի է լինի արևային, մութ վայրերում կարող է չաճել: Ռոտոնը բույսի համար շատ կարևոր է, քանզի երաշտի պայմաններում այն չի աճում: Բույսը ցրտադիմացուն է և ձմռանը լրացուցիչ պայմաններ պետք չէ ստեղծել պահելու համար: Բույսը կարելի է տնկել և սերմերի միջոցով: Քանի որ առանձին աճող բույսերն այդքան էլ լավ չեն աճում, հաճելի կլինի, եթե դրանք աճեցվեն մշտական: Աճեցմամբ կամ մշակությամբ զբաղվելու համար կարևոր է հիշել, որ այն պատկանում է կաղամբագգինների ու նրան կարող են վնասել կաղամբագգիններին բնորոշ բոլոր հիվանդությունները ու վնասատուները: Տեղափոխությունները չեն վնասում բույսին, եթե ճիշտ են արվում: Հաճելի բույսի շնորհիվ այն օգտագործվում է օձանեխների պատրաստման մեջ, ինչպես նաև յուրահատուկ տեսք է տալիս յուրաքանչյուր ծաղկեփնջի: Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

Advertisement for Agronews magazine. It features the magazine cover and subscription rates for 2015. The text includes: «ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի, 2015 թ. ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, 1 փարվա գինը՝ 3960 դրամ, 6 ամսվանը՝ 1980 դրամ, 1 համարինը՝ 120 դրամ, 1 փարվա գինը՝ 8100 դրամ, 6 ամսվանը՝ 4050 դրամ, 1 համարինը՝ 1350 դրամ. Բաժանորդագրությունը իրականացնում են՝ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Արարատ» կազմակերպությունները.